3. Մի քանիսն այլ բառեր՝ արուօր (=արտասուք), ծուք,
մանափանց ածական անուններ՝ հանոյ, պիտոյ, կազ (=պատ-
րաստ խմաստով), նախ (զլխամօր, առաջին խմաստով), զոյզ (=
=նշնել), զոմ, հաշտ, ձիգ, նման Թեք հոլովներում, ինչպես
նաև հոգնակի թվում, զրանց փոխարինում են նույնանիչ բառեր
կամ նույն արմատներից կազմած այլ ձևեր, օրինակ՝ ծուքն || ծուք,
արուօր || արասուք (սևս. արտասուց), հանոյ || հանոյական

կամ հանելի. պիտոյ || պիտոյական կամ պիտանի, կազմ || պատ-
րաստ, զոյզն || զուզեաքեայ, նման || նմանի, նախ || առաջին
և այլն:

Մեծ մասամբ չեն հոլովում բարդ կազմութիւն ունեցող
որոշ անպահաններ, ինչպես՝ ամբածածուկ, տառասնոն, հարասա-
րուան, միսխուան, սակզօծ և այլն:

Առանձին բառեր, հարադրական բարդութիւն ունեցող բայե-
րի կազմութիւն մեջ հանդես գալով որպէս հարադրութիւն բաղա-
դրիչներ, չեն հոլովում, օրինակ՝ ազգ առնել (=խմաց առլ, տե-
ղեկացնել), ազգ առլ (նախ նշանակութեամբ՝ խմաց առլ, տեղե-
կացնել), ազգ լինել (=խմացվել, խմաց արվել), սակախ հանդիպում
է նաև զ նախդիրով՝ առնուլ զազգ, այց առնել, բայց նաև ի
նախդիրով՝ այց ելանել (=առնուլ որ նախ, այցելել, խոնար, վրձն
առնել), խտատովն լինել, ժոյժ առնել, ժոյժ առնել (=հանդուր-
ժել, զիմարել, իրեն զուզել, սուլալ, համբերել և այլն), ուրաստ
լինել նաև ի նախդիրով՝ յուրաստ լինել, յուրաստ կալ (=առա-
նալ, մոռանալ), անվոյք առնել (=չնդալ), անվոյք լինել, նա-
խանձուկա արկանել (=գրգռել, հորդորել), նախ ձևով էլ ի նախ-
դիր ունեցող զարծածայնքում՝ ի չքմեղս առնուլ, ի չքմեղս
լինել (=անձեղ ձեանալ) և այլն:

Այս նրևոյքը պարսպազեր չէ հարադրական բարդութիւն
ունեցող բառերի բոլոր անվանական բաղադրիչների համար: Հա-
ճակ ալըզլուի բարդութիւններում որպէս բաղադրիչներ հանդես
են գալիս անվոյքի բառեր, որոնք առանձին վերջում հոլովում
են, օրինակ՝ զորժ առնել, զորժ դնել, այլն նախդիրներով ի զորժ
դնել, ի զորժ ամել, ի զորժ անկանել (=զործածվել, զորժի զբը-
վել, մշտնվել), սակախ զորժ բառը անկախ ալը բարդութիւննե-
րից հոլովում է՝ զորժոյ, զորժով և նույնակ ալըզլուի տառանքին
բարդութիւնների մեջ հանդիպում է հոլովմամբ՝ զորժոյ լինել (=
=զորժի լինել, զորժով զբաղվել), նմա՛ն առնուլ (=անձեղ, քայլել),
նմա՛ն բառը քայլվածք նշանակութեամբ հոլովում է Ի հոլովիչով
նմի, նմիւ, արտունջ առնել, արտունջ լինել. արտունջ բառը
կիճարույն զործածութեամբ հոլովում է Ո հոլովիչով՝ արտունջոյ,
արտունջ, և այսպէս շատերը:

¹ Գրաբարում կազմ բառը հանդես է գալիս նաև զոչակոնի արժեքով,
այս զեպքում հոլովում է: Այսուհի խոսքը վերաբերում է միայն կազմ ան-
կանին: Տե՛ս նաև շրտարանք-ուն:

§ 82. Գրարարի գրական և անպան անունների հոլովման ստանձառութիւնը ըստ է ապին, որ որոշ բաներ հոլովման մեջ հանդես են գալիս գուպուն հոլովման ձևերով հոլովվելով սարբեր հոլովիչներով: Այս անասկեայից ատանձապես հետաքրքրական պատկեր են ներկայացնում Ա, Ա պարզ հոլովմաների և Ա պարզ հոլովման ու Ի—Ա խան հոլովման (ներդրական) և ներկրից որոշ բաների գուպուն ձևերի հարակցութիւնները:

§ 83. Կան բաներ, որոնք գուպունարար հոլովում են Ա և Ա հոլովիչներով, օրինակ՝ արշ—արշու, արջոց || արշու, արջուց (շտա աշ ժամանակներում՝ նաև Ի հոլովիչով). երկնշ—երնշու, երնշուց || երնշու, երնշուց (աշ ժամանակներում հանդիպում է նաև այլ հոլովիչով, օրինակ՝ երնշու), ուլ—ուլու, ուլուց || ուլու, ուլուց: Այսպես նաև Ա և Ա հոլովիչների ենք հանդիպում ապուս, ափու, կոքուս, հաւ բաներում, սակայն սրանց մեջ Ա-ն աշ շքանից է, և, բացի դրանից, սրանցից մի քանիսը ուրիշ հոլովիչներով էլ են հոլովում (Ի, Ա):

Այս փաստերը թեև սովորաբար, բայց ընտրու են Ա հոլովման էփուլացիան ըստ տալու համար: Սա ընդհանուր պատմական նշխարափոխութիւն արգլունք է, որը սովիչ պարզ է երևում, երբ նկատու ենք անհնում ամբողջ հարեներ: Ժամանակիցից գրական հարեներում և բարբառներում կարելի է ըստիլ ասլ բազմաթիվ բաներ, որոնք հոլովում են Ա-ով, բայց մի ժամանակ հոլովվիլիս են կելի Ա-ով: Հիշենք, թեկուզ, անորոշ գերբայի հոլովմամբ՝ գնալուց՝ գնալու, գրելուց՝ գրելու, նասելուց՝ նասելու և այլն: Կամ գրականներից՝ մարդուց՝ մարդու, որդուց՝ որդու, սոխուց՝ սոխու և այլն:

Այս գործուն օրինաչափութիւնից բացի, ատանձին բառանկերում կելի է նաև հակառակ երևալիք, որը, սակայն, բնորոշ չէ իբրև կանոն:

§ 84. Կան բաներ, որոնք գուպունարար հոլովում են ներդրական Ա պարզ և Ի—Ա խան հոլովումներով, օրինակ՝ օտին—օտին || օտին, բուսն—բուսն || բուսն, գիւլցաղին || գիւլցաղան, ստեղին (—ժառի բան, բայից ջոցուն, ծիլ, Հուլի և այլն)—ստեղան || ստեղին: Այս փաստերը երևան են հանում Ա պարզ և Ի—Ա խան հոլովումների (ներդրական) կապը, որն ապացուցվում է ոչ միայն այս, այլև ուրիշ փաստերով: Ի—Ա ներդրական հոլովման ենթակաշտա բաների կզակի բացատրանում հանդես է գալիս Ա հոլովիչը, ինչպե՛ս լեզանէ, լեզանէ, ի գառանէ (կամ ի գառնէ), ի թուանէ (կամ ի թռննէ), ի խաշանէ (կամ ի խաշնէ), ի մասանէ (կամ ի մասնէ) և այլն, որը հասուկ է Ա հոլովման: Նշանակալի է նաև այն փաստը, որ աշխարհարարում ու որոշ բարբառներում այս կարգի բաներից մի քանիսը որոշ հոլովներում անհնում են Ա հոլովման ձև (աշխարհարարի ան հոլովումը), ինչպիսի՝ կղ—կզան, թուս—թուսու, բնս—բնուս և այլն:

Նշելով այս կապը՝ միամանակ շի կարելի անսուսել քերականական նմանակութիւնը, որի հիման վրա ատանձին բաներ կարող էին շեղվիլ իրենց հոլովման սկզբնական օրիպից: Ըստ պատմա-համեմատական քերականութիւնի՝ այս հոլովմաները նախ ժուգան անհն: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է հոլովման հոդի վրա նրանց ձևափոխումից հետո ստաշայած հարակցութիւններին:

§ 85. Որոշ բաներ հանդիպում են մեկից ավելի հոլովմամբ. հոլովման փոխանցումներով, օրինակ՝ աման—ոյ, ոց || ի, ոց || ի, ասած—ի, ից || ոյ, ոց, դահ—ու, ոց || ոյ || ի, ից, դանձ—ու, ոց || ի, ից, դոն—ոյ, ոց || ի, ից, զբոշ—ու, ոց || ի, ից, զարդ—ու, ոց, ուք || իւք, թթն—ոյ, ոց || ի, ից || աց, թուղ—ոյ, ոց || ի, ից, մարդ—ու, ոց, մոց || ի, աց, նաւ—ու, ոց || ի, աց և այլն: Հոլովման այս օտարերութիւններից մի քանիսը սարբեր ժամանակների վիպութիւնների արգլունք են:

§ 86. Բարզ և անանպար բաների հոլովման ժամանակ բուսի վերջին բաղադրիչը հաճախ հոլովում է ոչ այն հոլովմամբ, որով հոլովվում է սովորաբար ատանձին վերջված, օրինակ՝ դիբ—դրու, դրոց, բայց՝ մասնապիբ—մասնապիբի, մասնապիբաց, սեր—սիլու, բայց՝ աշխատաբ—աշխատաբի, աշխատաբաց, բարեւեր—բարեւիբի, բարեւիբաց, զին—զինու, բայց՝ ապագլին—ապագլինի, ապագլինաց, խոք—խոքից, բայց՝ շարախ—շա

¹ Ա—Ա էփուլացիան § 83-ում նշված մի բանի բաների մեջ ապացուցվում է նաև նրանց (աշ բայի) ստաշարանութիւնը. ուլուսն՝ արշ<նիս, բննն, ուլ<նի, բնն (սե՛ն չ, Անասյան, Էւոյիբն արժատականք բառարան), հաս. 1, V, Համապատասխան բաների սակ:

բախօսի, շարտիտաց, սիրտ—օրտի, օրտից, բայց՝ վատասիրտ—
վատասրտի, վատասրտաց, մահ—մահաւ կամ մահաւան, բայց՝
անմահ—անմահի, անմահից, լուր—լուստը, բայց՝ անլուր—անլուսի,
անլուսից և այլն:

§ 87. Տարրերտ թլուններ կն նկատումս նաև հասուկ անուն-
ների հոլովման մեջ, օրինակ՝ Հալի—Հալիայ || Հալիև, Գալիթ—
Գալիայ || Գալիթի, Դալիտս—Դալիտս || Դալիայ, Շաղիտա—Շաղի-
տայ || Շաղիտայի և այլն:

Հոլովման տարրերտ թլունների մասին համապատասխան տե-
ղերում խոսվել է:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՀՈՂՈՎՈՒՄԸ

§ 88. Գրարարի թվական անունները 3 տեսակ են՝ քանա-
կական, զատական և անձներական: Սրանք հոլովման ըստհա-
տուկ սխառեմ չունեն, հոլովում են զոյական անունների նման՝
մասնակի առանձնահատկություններով:

ՔԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՀՈՂՈՎՈՒՄԸ

§ 89. Գրարարի քանակական թվականներն են՝ մի, երկու,
երեք, չորք, հինգ, վեց, երկն կամ եօթն, ութ, ինն, ասան, իսկ
ախաճեաև միավորները բարդում են վերջինիս հետ, այնչա-
նալով սկզբից՝ մեասան, երկասան, երեքասան, չորքաս-
սան, հնգասան, վեչասան, ապա միավորում են և շարկապով
ևս թնեասան, ութնասան կամ ութնասան, իննասան, քսան, այլ
և հայտոյ տասնյակներից հետո միավորները հարադրում են վեր-
ջից, կապվելով և շաղկապով՝ քսան և մի, քսան և երկու, քսան
և երեք . . . , երեսուն, երեսուն և մի, երեսուն և երկու . . . , քա-
սասուն, քսասուն և մի, քսոտսուն և երկու . . . , զիսուն, զիսուն և
մի, զիսուն և երկու . . . , վաթսուն, վաթսուն և մի, վաթսուն և եր-
կու . . . , ևսթանասուն, ևսթանասուն և մի, ևսթանասուն և երկու . . . ,
ութսուն, ութսուն և մի, ութսուն և երկու . . . , իննսուն, իննսուն և

¹ Այսուից արժում են գրարարի թվականների հիմնական տեսակները:
Թվականներից զանազան միջոցներով (հրկնությամբ, ամանցմամբ և այլն)
հազվագ ալլ բառակերթ ու նրանց իմաստների քննարկումն այս գրքի
նպատակից զուրս է: Գրանց մասին տես Ն. Անտոյան, «Լիակատար քերական-
ության հայոց լեզվի» համեմատությամբ 262 լեզուների, հատ. I, Երևան:
1962 թ., էջ 272—273:

մի, ինձանձն եւ երկու... հարևար, հարևար եւ մի, երկիրից, երեքհարևար, շորեքհարևար, հինգհարևար, վեցհարևար, եւթնհարևար, ութնհարևար, ինձնհարևար, հարցար, ընդ (բնութ), երկու ընդ, երեք ընդ եւ այլն:

§ 90. Այս թվականներից բոլորը միեւնույն հարավից չեն հարավում: Առանձին թվականներ կամ թվականների առանձին խմբեր հարավում են ապրանք հարավումներով:

§ 91. Այլ թվականը անհոգնական է, հարավում է Ա հարավից, սեռականում ստանում է շ հարավից, բացասականում եւ կա այց մասնիկը, սակայն արականը որդեա կանոն կազմում է աւմ հարավից:

Ազգ. մի
Ա. միտ, միտ
Տ. միտ
Հ. գմի
Բ. ի միտ, ի միտ
Գ. միտ

§ 92. Երկու թվականն աննպական է, հարավում է Ա հարավից: Սա հոգնակի ուղղականում ք մասնիկ ստորադար չի ունենում: Հոգնակի ուղղականում ք մասնիկով հանդիպում են շոտ սակավաթիվ օրինակներ, ինչպես՝ «... Չէին երկուքն միայն անարարք, ալ չինք» (Եզնիկ, 1, Ը, էջ 24), «Եկրինքն երկուք, մի գուկիր, եւ մի թագաւորն Յանայ» (Բուգ., IV, ԾՊ, էջ 256): Փորձականը ըստ կանոնի կա երկուք ձևով, բայց նրա փոխարեն ստորադարը գործածվում է երկուսը, որը, սակայն, անանորականի մէջ է:

Ազգ. երկու
Ա. երկուց
Տ. երկուց
Հ. զերկուս
Բ. իրկուց
Գ. երկուքումք, երկուք

3 Պա ցույց է առնու, որ արականում հոգնակի կզի է շ հարավից արականից: որը, սակայն, լայն գործածութեան չի ունենիլ (մեք մասնական գրութեան մէջ պահպանվի են շոտ հարավից օրինակներ):

§ 93. Երեք եւ չորս թվականներ եւ աննպական են, նրանք՝ հարավում են Ի պարզ հարավում: Այսպես՝

Ազգ. երեք	չորս
Ա. երկուց	չորսից
Տ. երկուց	չորսից
Հ. զերեքս	զչորս
Բ. իրեքից	ի չորսից
Գ. երեք	չորսիք

§ 94. Հինգից սկսած մինչև ինն (ներառյալ) թվականները՝ յացի ենքն թվականից, հարավում են Ի պարզ հարավում: Թէ արանք եւ թէ արանց հաջորդող բոլոր թվականները հարավում են Ե՝ եզակի, Ե՝ հոգնակի թվով:

Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.	Հոգնակի ք.
Ազգ. չինգ	չինգք	վեց	վեցք
Ա. հնգի	հնգից	վեցից	վեցից
Տ. հնգի	հնգից	վեցից	վեցից
Հ. զչինգ	զչինգս	զվեց	զվեցս
Բ. ի հնգի	ի հնգից	ի վեցից	ի վեցից
Գ. հնգիս	հնգիք	վեցիս	վեցիք

Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.	Հոգնակի ք.
Ազգ. ութ	ութք	ինն	իննք
Ա. ութի	ութից	ըննի	ըննից
Տ. ութի	ութից	ըննի	ըննից
Հ. զութ	զութս	զինն	զիննս
Բ. լութի	լութից	լըննի	(լըննից)
Գ. ութիս	ութիք	ըննիս	ըննիք

Հինգ թվականը հոգնակի գործիականում ունենում է նաև հարգոք ձևը՝ (որն աղիցի գործածական է), իսկ դա խառն հարավում:

հնար է: Իճն թվականը հոգնակի թվում հորոխում է նաև Ա հոր-
 վիտ' ինուկը, ինուկն, ինուկն, զինուկն, յինուկն, ինուկք:

§ 95. Եւքն (հոթն) թվականը հորոխում է Ա պարզ ներդրու-
 կան հորոխմամբ:

Եզակի բ.	Հոգնակի բ.
Աւղղ. Լւթն	Լւթանք
Ս. Լւթան	Լւթանց
Տ. Լւթան	Լւթանց
Հ. զԼւթան	զԼւթանս
Բ. լւթանէ	լւթանց
Պ. Լւթամբ	Լւթամբք

Այս բառի հորոխման մեջ հանդիպում են նաև այլ մեքր. ինչ-
 պես՝ Լւթին, Լւթնի, Լւթնիւ, Լւթան, Լւթանք:

§ 96. Տասն, Եւքնետասն, ուրկասն (ութաստան), իննե-
 տասն թվականները հորոխում են Ի—Ա խոսն ներդրական հո-
 լովմամբ: Օրինակներ.

Եզակի բ.	Հոգնակի բ.	Եզակի բ.	Հոգնակի բ.
Աւղղ. տասն	տասնք	Լւթնետասն	Լւթնետասանք
Ս. տասին	տասանց	Լւթնետասին	Լւթնետասանց
Տ. տասին	տասանց	Լւթնետասին	Լւթնետասանց
Հ. զտասն	զտասնս	զԼւթնետասն	զԼւթնետասանս
Բ. ի տասնէ	ի տասանց	լւթնետասնէ	լւթնետասանց
Պ. տասամբ	տասամբք	Լւթնետասամբ	Լւթնետասամբք

Եւքնետասն թվականը հոգնակի ուղղականում և բազմալ-
 նից ստաշ ստանում է ոչ թե ու, այլ՝ ա—Եւքնետասանք, ալս-
 տակից էլ հալցականը՝ զԵւքնետասանս. ալս մեով են լինում նաև
 մյուսները՝ ուրկետասն (ութետասն), իննետասն:

§ 97. Մետասան, երկտասան, երեքտասան, չորքտասան,
 ցնգտասան, վեցտասան թվականները հորոխում են Ի պարզ հո-
 լովմամբ: Օրինակներ.

Եզակի բ.	Հոգնակի բ.	Եզակի բ.	Հոգնակի բ.
Աւղղ. մետասան	մետասանք	վեցտասան	վեցտասանք
Ս. մետասանի	մետասանից	վեցտասանի	վեցտասանից
Տ. մետասանի	մետասանից	վեցտասանի	վեցտասանից
Հ. զմետասան	զմետասանս	զվեցտասան	զվեցտասանս
Բ. ի մետասանէ	ի մետասանից	ի վեցտասանէ	ի վեցտասանից
Պ. մետասանիւ	մետասանիւք	վեցտասանիւ	վեցտասանիւք

§ 98. Ի պարզ հորոխմամբ հորոխում են նաև քսան, երեսուն,
 քառասուն, յիսուն, վարսուն, Եւքնաքսուն, ուրսուն, իննսուն
 թվականները, ըստ որում, թեք հորոխմամբ և.ից ստաշ ու-ն սրգ-
 վում է՝ երեսնի, քսասանի, յիսնի, վարսնի, Լւթնանանի, ութննի,
 իննանի հորոխման օրինակներ.

Եզակի բ.	Հոգնակի բ.	Եզակի բ.	Հոգնակի բ.
Աւղղ. քսան	քսանք	Երեսուն	Երեսունք
Ս. քսանի	քսանից	Երեսնի	Երեսնից
Տ. քսանի	քսանից	Երեսնի	Երեսնից
Հ. զքսան	զքսանս	զԵրեսուն	զԵրեսունս
Բ. ի քսանէ	ի քսանից	լԵրեսնէ	լԵրեսնից
Պ. քսանիւ	քսանիւք	Երեսնիւ	Երեսնիւք

§ 99. Հարեւր (հարիւր), երկերիւր, երեքարեւր, չորքարե-
 վր, ցնգարեւր, վեցարեւր, Եւքնարեւր, ուրբարեւր, իննարե-
 վր թվականները հորոխում են Ո պարզ հորոխմամբ, օրինակ՝

Եզակի բ.	Հոգնակի բ.
Աւղղ. հարեւր	հարեւրք
Ս. հարիւրոյ	հարիւրոց
Տ. հարիւրոյ	հարիւրոց
Հ. զհարեւր	զհարեւրս
Բ. ի հարիւրոյ	ի հարիւրոց
Պ. հարիւրով	հարիւրովք

Այսպես էլ մյուսները:

§ 100. Հազար թվական անունը հոլովվում է Ի-Ա խառն վերջադրական հոլովմամբ:

եզակի բ.	Հոգնակի բ.
Ազգ. հազար	հազարք
Ս. հազարի	հազարաց
Տ. հազարի	հազարաց
Հ. զհազար	զհազարս
Բ. ի հազարէ	ի հազարաց
Փ. հազարաւ	հազարաք (օք)

§ 101. Բնւք (բխւք) թվականը հոլովվում է Ու պարզ հոլովմամբ:

եզակի բ.	Հոգնակի բ.
Ազգ. բնւք	բնւքք
Ս. բխւք	բխւքաց
Տ. բխւք	բխւքաց
Հ. զբնւք	զբնւքս
Բ. ի բխւքէ	ի բխւքաց
Փ. բխւքաւ	բխւքաք

Այս բառը հանդիպում է նաև այլ հոլովիչներով բխւքաւ (Բուգ., IV, ԼԸ, էջ 232), բխւքոք (Բուգ., IV, ԻԸ, էջ 225), բխւքով (Բուգ., IV, ևՊ, էջ 235), բխւքոց (Խոր., I, ՉԶ, էջ 52):

§ 102. Հարադրական կազմովուն անցող բաղադրյալ քանակական թվականները հոլովվում են երկու կերպ՝ ա) հոլովվում է միայն վերջին բաղադրիչը, բ) հոլովվում են բոլոր բաղադրիչները, արեւակ՝

Ազգ. քսան և երեք	քսան և երեք
Ս. քսան և երից	քսանից և երից
Տ. քսան և երից	քսանից և երից
Հ. զքսան և երիս	զքսան և զերիս
Բ. ի քսան և երից	ի քսանից և լերից
Փ. քսան և երիք	քսանիք և երիք

ԳՐԱՍԿԱՆ ԲՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒՈՎՈՒՄԸ

§ 103. Գրարարում զասական թվականները կազմվում են քանակական թվականներից՝ երրորդ կամ բորդ ածանցներով, բայց առաջին թվականից, որը հանդես է գալիս բարահասակ ձևով և սովորական առաջին ձևին զուգահեռ անի նաև առաջնորդ և առաջնորդի ձևերը: Մնացած բոլորը հիշյալ ածանցներով են երկրորդ, երրորդ, չորրորդ, միեկերորդ, վեցերորդ, երեսներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, մետասներորդ, երկուսասներորդ, երեքասներորդ... քսաներորդ, ըսաներորդ առաջնորդ կամ ըսաներորդ առաջնորդ, ըսաներորդ և առաջին, ըսաներորդ երկրորդ..., երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, վարսներորդ, երեսասներորդ, ուրսներորդ, իննսներորդ, ճարիւրբորդ կամ ճարիւրբորդ, հազարերորդ և այլն:

§ 104. Առաջին թվականը հոլովվում է Ու հոլովիչով, եզակի արականում զուգահեռաբար անկում է ում հոլովակերտ մասնիկը, իսկ այս զեզակում եզակի բազմականում ստանում է և է հոլովակերտ մասնիկը:

եզակի բ.	Հոգնակի բ.
Ազգ. ստաջին	ստաջինք
Ս. ստաջնոյ	ստաջնոց
Տ. ստաջնոյ, ստաջնում	ստաջնոց
Հ. զստաջին	զստաջինս
Բ. ըստաջնոյ, ըստաջնմէ	ըստաջնոց
Փ. ստաջնով	ստաջնովք

§ 105. Սկսած երկրորդ թվականից մյուս բոլոր թվականները հոլովվում են Ի-Ա խառն վերջադրական հոլովմամբ, եզակի արականում զուգահեռաբար ստանում են ում հոլովակերտ մասնիկը, օրինակ՝

1 Չորրորդ, սասներորդ ձևերին զուգահեռ զան նաև քառորդ, ասանորդ ձևերը խտասային արդ սարբերութբաբ:

Եզակի բ.	Հողանակի բ.
Ա. զգ. երկրորդ	երկրորդք
Ս. երկրորդի	երկրորդաց
Տ. երկրորդի, երկրորդում	երկրորդաց
Հ. զերկրորդ	զերկրորդս
Բ. լերկրորդէ	լերկրորդաց
Պ. երկրորդաւ	երկրորդացք (օք)

§ 106. Հարադրական բարդութիւնք կազմված գասական թվանակները հորովելիս՝ սովորաբար հորովվում են բարդութեան մեջ մտնող բոլոր թվականները, օրինակ՝ հազարերորդ քառասներորդ ճինգերորդ, սևս. հազարերորդի քառասներորդի ճինգերորդի...

ԱՆՁՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՀՈՒՈՎՈՒՄԸ

§ 107. Անձներական թվականները ցույց են տալիս ստորականների քանակը, միասմանակ նշելով նրանց միասնականութիւնը, ամբողջականութիւնը, նրանց՝ միասնական ասումը խոսքի մեջ, օրինակ՝ երկրին կամ երկրքեան նշանակում է երկուսն էլ երկուսը միասին:

§ 108. Անձներական թվականները կազմվում են քանակական թվականներից — երին, — եքեան (մասնակի փոփոխութեան հետ) ամացնելի օգնութեամբ, օրինակ՝ երկրին կամ երկրքեան, երբրին կամ երքեան, չորքին կամ չորքեան, հեզքին կամ հեզքեան, վեցքին կամ վեցքեան, եւթանքին կամ եւթանքեան..., տասներին կամ տասներքեան, երկուսասներին կամ երկուսասներքեան և այլն:

§ 109. Այս թվականները հորովվում են Ա հորովելով, միայն հոգնակի թվով:

Ա. զգ. երկրքին,	երկրքեան
Ս.	երկրցան, երկրցանց
Տ.	երկրցան, երկրցանց
Հ.	զերկրսին, զերկրսեան
Բ.	լերկրցանց
Պ.	երկրցամքք

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ ԳՈՏԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 110. Գրաբարում թվականները գրական անունների հետ գործածվելիս նամաձայնում են տարբեր ձևերով:

§ 111. Մի քանակական թվանշը գրական անվան հետ գործածվում է թե նախագաս, թե նստացաս և երկու զեպքում էլ հորովվում է: Գրական անունը այս զեպքում հանդես է գալիս միայն եզակի թվով, օրինակ՝

Ետագաս Ետխագաս

Ա. զգ. այլ մի	մի բան (=մի խոսք)
Ս.	սան միով կամ միոջ
Տ.	սան միում
Հ.	զայր մի
Բ.	լսանէ միոջէ
Պ.	արամք միով

ՄՆԱՅՈՒԹՅՈՒՆ.— Մի թվանշը նստացաս գործածութեամբ այնչի շուտ անորոշութեան խմտաւ է արտահայտում, կատարելով անորոշ զերանվան զեր, օրինակ՝ այլ մի — այլ ոմն, այլ ոք (որեւ մարդ, ինչ-որ մարդ, մի մարդ), իսկ նստացաս գործածութեամբ ցույց է տալիս որոշակի քանակ (մեկ), օրինակ՝ միով բանիս — մի. խոսքով, միով ակամք — մի ասքքով:

§ 112. Երկու, երեք, չորք քանակական թվականները գրական անունների հետ գործածվում են հ՝ նախագաս, և՛ նստացաս, երկու զեպքում էլ հորովվում են: Սրանց հետ գրական անունները գրվում են միայն հոգնակի թվով և նամաձայնում են բոլոր հորովներում:

Ետխագաս

Ա. զգ. երկու եղբարք	երեք արք	չորք անկիւնք
Ս.	երկուց եղբարց	չորեց անկեանց
Տ.	երկուց եղբարց	չորեց անկեանց
Հ.	զերկուս եղբարս	զերկուս արս
Բ.	լերկուց եղբարց	լերկուց արանց
Պ.	երկու(ք) եղբարքք	երկուք արամքք

Ծառագաս

Ա.դդ.	Էզրարբ Երկու	արք Երեք	անկիւնք չորք
Ս.	Էզրարց Երկուց	արանց Երից	անկնանց չորից
Տ.	Էզրարց Երկուց	արանց Երից	անկնանց չորից
Հ.	Գեղարս Երկուս	գարս Երիս	գանկելուս չորս
Ք.	Ճեղրարց Երկուց	լարանց Երից	լանկնանց չորից
Պ.	Էզրարբ Երկուք	արամբք Երկուք	անկեամբք չորիւք

§ 113. Մլուս քոնակական թվականները սկսած ճինգ թվականից գոյական անունների հետ նախոյնս նախագաս և Եսապաս գործածութիւն անենս թվականը նախագաս գործածութիւն զեզրամ և զգակի գոյական անվան հետ չի հարկվում. գոյականը հարկվում է, իսկ թվականը մնում է անփոփոխ, միայն իր վրա կրելով նախդիրները, օրինակ՝

Ա.դդ.	Հինգ հաց	վեց ժամ	ասան սլր
Ս.	Հինգ հացի	վեց ժամու	ասան սուն
Տ.	Հինգ հացի	վեց ժամու	ասան սուն
Հ.	Գ՛հինգ հաց	զվեց ժամ	զտասն սլր
Ք.	Ի հինգ հացէ	ի վեց ժամէ	ի տասն սունէ
Պ.	Հինգ հացիւ	վեց ժամու	ասան արամք

§ 114. Հոցնակի թվով գոյական անվան հետ զրգիւղով թվական անունը նախագաս գործածութիւնը կարող է հարկվել և ճեռլովել, օրինակ՝

Ա.դդ.	Հինգ ամք	հինգ՝ ամք
Ս.	Հինգ ամաց	հնցից ամաց
Տ.	Հինգ ամաց	հնցից ամաց
Հ.	Գ՛հինգ ամս	զհինգ ամս
Ք.	Ի հինգ ամաց	ի հնցից ամաց
Պ.	Հինգ ամաք(օք)	հնգուք(նակ օք) ամաք (օք)

՝ Ազգական և հայցական հարկներում թվականը մնում է կզակի:

§ 115. Դասական թվականները գոյական անունների հետ և՛ նախագաս, և՛ Եսապաս գործածութիւն անեն, ըստ որում գոյական անունը գործածվում է միայն կզակի թվով: Դասական թվականները սովորաբար հարկվում են Եսապաս գործածութիւնը:

Նախագաս Ծառագաս

Ա.դդ.	չորրորդ ժամ	ժամ չորրորդ
Ս.	չորրորդ ժամու	ժամու չորրորդի
Տ.	չորրորդ ժամու	ժամու չորրորդի կամ չորրորդում
Հ.	զչորրորդ ժամ	զժամ չորրորդ
Ք.	ի չորրորդ ժամէ	ի ժամէ չորրորդէ
Պ.	չորրորդ ժամու	ժամու չորրորդաւ

Դասական թվականները կրբնն հանդիպում են հարկվում նաև նախագաս գործածութիւնը՝ ի չորրորդում պահու, լերկրորդում աւար և այլն:

§ 116. Առաջին թվականը կրկու զեզրամ էլ հարկվում է, օրինակ՝

Նախագաս Ծառագաս

Ա.դդ.	առաջին օր	օր առաջին
Ս.	առաջնոյ աւար	աւար առաջնոյ
Տ.	առաջնում աւար	աւար առաջնում
Հ.	զառաջին օր	զօր առաջին
Ք.	լուռաջնէ օրէ	լօրէ առաջնէ
Պ.	առաջնոյ աւարք	աւարք առաջնոյ

§ 117. Անձնկրական թվականները գոյականների հետ գործածվում են նախագաս, հարկվում են և համաձայնում թվով ու հարկվով, օրինակ՝

Ա.դդ.	չորեքին կամ	չորեքնան կողմանք
Ս.	չորեքուն կամ	չորեքունց կողմանց
Տ.	չորեքուն կամ	չորեքունց կողմանց
Հ.	զչորեքին կամ	զչորեքնան կողմանս
Ք.	ի չորեքունց	կողմանց
Պ.	չորեքումք	կողմամքք

ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒՍՎՈՒՄԸ

§ 118. Գերանունները գրաբարում ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝ անձնական, փոխադարձ, ցուցական, ստացական, հարցական, հարթբերական, անորոշ, որոշյալ (անձներական):

§ 119. Գերանունների մի մասն անվանական հոլովում ունի, այսինքն հոլովում է զոչական (ինչպես նաև անվանական և թվական) անունների նման, հոլովիչներով, իսկ մի մասն էլ հոլովում է լուրանառուի ձևով՝ առանց հոլովիչների, արժատների փոխանցումներով է սրանց լուրանառուի փոխառություններով. այդ պատճառով էլ զրանց հոլովումը մեր քերականագիտության մեջ բնորոշված է կոչել զերանվանական հոլովում: Որոշ զերանունների հոլովման մեջ էլ նկատվում է անվանական և զերանվանական հոլովումների համադրումը:

ԱՆՉՆԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒՍՎՈՒՄԸ

§ 120. Գրաբարի անձնական զերանուններն են՝ ես, դու, նա ինքն, իւր՝: Անա զրանց հոլովումը.

Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.	Հոգնակի ք.
Ուղղ. ես	մենք	դու	դուք
Ս. իմ	մեր	քո	ձեր
Տ. ինձ	մեզ	քեզ	ձեզ
Հ. զիս	զմեզ	զքեզ	զձեզ
Բ. լինէն	ի մէնջ	ի քէն	ի ձէնջ
Պ. ինև	մեւք (մեօք)	քև	ձեւք (ձեօք)

¹ Տե՛ս Սո. Մայիսյանց, «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդրերի կերպը», 1921 թ., Թիֆլիս, էջ 29, այլև՝ Մ. Արեղյան, «Գրաբարի համառոտ բնագիտություն», 1908 թ., էջ 121:

² Ինքն և իւր զերանունները սմանք ասանձնացնում են որդեա անգրադարձ զերանուններ:

Եզակի ք. Հոգնակի ք.

Ուղղ. նա	նոքս
Ս. նորա	նոցս
Տ. նմա	նոցս
Հ. զնա	զնոսա
Բ. ի նմանէ	ի նոցանէ
Պ. նոյաւ	նոքաւք (նօքօք)

Եզակի ք. Հոգնակի ք. Եզակի ք. Հոգնակի ք.

Ուղղ. ինքն	ինքեանք	—	իւրեանք
Ս. ինքան	ինքեանց	իւր	իւրեանց
Տ. ինքան	ինքեանց	իւր	իւրեանց
Հ. զինքն	զինքեանա	—	զիւրեանա
Բ. լինքնէ	լինքեանց	լիւրմէ	լիւրեանց
Պ. ինքեամք	ինքեամքք	իւրև, իւրեաւ,	իւրեամքք
		իւրեամք	

§ 121. Անձնական զերանունների ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է եզակի արական և հոգնակի հայցական հոլովների միջոցով: Բացասություն է կազմում ևս զերանունը, որի եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցական հոլովի միջոցով՝ չիս:

§ 122. Առաջին և երկրորդ դեմքի անձնական զերանունները բացասական հոլովում ունեն նաև ձևեր՝ ինձէն, մեզէն (ճան՝ մեղոյն), քեզէն (ճան՝ քեզոյն), ձեզէն (ճան՝ ձեզոյն): Ստիպել սրանց մեջ բացասական հոլովի իմաստը զրիթի չի գիտակցվում: Արանք գրաբարում սպասարկու բաների կիրառություն ունեն: Սոփորաբար գործածվում են առաջին և երկրորդ դեմքի զերանունների հետ՝ սաստկական նշանակությամբ, օրինակ՝ «... Ես ինձէն աչօք տեսի...» (Եղիշե, II), «... Մեք մեզէն ողջ եմք...» (Եղիշե, I): Այս օրինակներում կիրառված են սաստկական նշանակությամբ՝ ևս ինքս, հենց ես, մենք ինքնիր, հենց մենք:

Այլ գործածվում են ստանձին, ինչպես՝ «...Ապես քեզէն զձնոսնէ՝ արբայն Հայոց Արշակայ...» (Բագր, IV, մՊ, էջ 252): Այստեղ գործածված է զերանվան իմաստով. այն էլ՝ ուղղական

հովիտի նշանակութեամբ, սակայն պատակական որոշ երանգով. «Դու ինքզնի կրճենա հայոց Աբշակ արքայի ձեռքից»:

Հաճախ այդ ձևերի հետ հանդես է գալիս իսկ եղանակաբարձ քաղբ, որը ավելի ևս սաստկացնում է խմատը, օրինակ՝ «... Ընթք մեղկն իսկ ողջ եմք» (Ագաթ., էջ 76): Կամ՝ «... Որոց մեղկն իսկ սխանատեսք եղեալ...» (Ագաթ., էջ 470): «... Մեղկն իսկ սխանատես եղաք այնմ գիւտնի» (Պար., II, Ժ, էջ 120):

§ 123. Գրաբարում երրորդ զեմքի համար գործածվում են նաև, ինքն և իր զերանունները, որոնք, սակայն, խմատով և մասնավոր գործածութեամբ աստիճանավորում են:

§ 124. Ինքն զերանունը հաճախ գործածվում է առաջին և երկրորդ զեմքերի անձնական պատանունների հետ, սաստկական նշանակութեամբ՝ ևս ինքն, դու ինքն, նույն ձևով էլ կարող է գրվել երրորդ զեմքի նա զերանվում հետ, ինչպես՝ նա ինքն է (Ագաթ., էջ 121):

Ինքն զերանունը թեև երրորդ զեմքի է, կարող է այլ զեմքի խմատով առանձին գործածութեան անհնար, օրինակ՝ ինքեանք ի նեմն կաւոյ եմք (աստղին զեմքի նշանակութեամբ):

§ 125. Անձնական զերանունների հետ սաստկական նշանակութեամբ գործածվում է նաև ինքնին քաղբ, հաճախ իսկ քառի հետ: Այդ կարելի է անունել ստորե թերթում օրինակներում. «... Ես ինքնին իսկ, սաէ, գիւթայի ջանալ կատարել» (Քաղ., IV, Գ, էջ 121)՝ Ես ինքն, ևս էլ, սասա է, ձգտում էի կատարել: Ե՛ս, դու ինքնին գիտես...» (Ագաթ., էջ 121)՝ Ե՛վ դու ինքզն, հենց դու գիտես... «Գուք իսկ ինքնին գիտէք...» (Ագաթ., էջ 121)՝ Հենց դուք ինքներդ գիտեք: «Գուք ինքնին գիտէք դուք ամենաքն չարիս...» (Ագաթ., էջ 126)՝ Դուք էլ, դուք ինքներդ գիտեք այն բոլոր շարիքները:

Ինքն զերանունն անկախ կիրառութեամբ ինքն ևս կարող է ընդունել սաստկական նշանակութեան արտահայտող բառեր՝ իսկ, իւրովի: «... Ինքն իսկ կարող էր առեւել...» (Նգնիկ, II, Գ, էջ 82)՝ Հենց ինքն կարող էր ստեղծել: «Ինքն իսկ իւրովի» (Նգնիկ, II, Ե, էջ 90)՝ Հենց ինքն:

§ 126. Իւր անձնական զերանունը չունի եզակի թվի ուղղական և հայցական հոլովները, գործածվում է ինքն զերանվում նշանակութեամբ, օրինակ՝ «... Իւր անվն ըստգաք բնակութեան յիննեաց»

(Նգնիկ, I)՝ Իրեն, իր համար այնպես ընկալվեան քաղաք չինեց: «... Ակտա ստել սակա մի, խտեղ զանձնէ իւրմէ դանօրհնութիւն ևս դրամբասան մեղաց՝ որ իւր չէր գործեալ» (Քաղ., IV, Գ, էջ 107): Ակտեց մի քիչ ստել, իր մասին ստել մեղադրական բամբասանքներ ու անօրինակութեան, որ ինքը չէր կատարել:

Այս զերանվում պակասող հոլովների փոխարեն գործածվում է ինքն զերանունը: Մակայն Նգնիկի մաս հանդիպում ենք եզակի հայցականում իւր զերանվում գործածութեանը՝ «... Զայսն ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ» (Նգնիկ, I)՝ Ե՛վ ուրիշներին նրանց տեղերը, նրանց փոխարեն իր մտ կանչեց նույն պատրաստութեամբ: Կոչել բայի մաս առ նովոգիրը կարող է գրվել հայցական և ոչ արական հոլովի դրա: Այստեղ սպասելի էր առ ինքն, ինչպես հանդիպում ենք ուրիշ նեղիմանների երկերում. օրինակ՝ «Մտնմ ժամանակի կոչը ևս ինքն Շառաք աբքան Պարսից զխաղաւորն Հայոց զկերակը» (Քաղ., IV, Ժ, էջ 192) Այն ժամանակ Պարսից Շառաքն արքան իր մտ կանչեց (աստացի՝ կանչում էր) Հայոց Աբշակ թագավորին:

§ 127. Անձնական զերանունների խմատով հաճախ գործածվում է անձն զոչական տնունը (թեք հոլովներում): Ստորե թերթում ենք օրինակներ: «... Զիկանս անձինն շահւն...» (Նգնիկ, I, Գ, էջ 15)՝ Իր կյանքը փրկելու համար «... Լ տալնապից զկատարան և զանձինս կացողանն...» (Նգնիկ, I, Գ, էջ 13—14)՝ Կատարարդին և իրենց տալնապից մեզ են գնում: «... Անձամբ զանձն զարեայ...» (Նգնիկ, I, Ժ, էջ 38)՝ Ինքն իրեն զարեաց: «... Պարտ է նա զամենայն կարողութիւն յանձին անել» (Նգնիկ, IV, Բ, էջ 124)՝ Ամբողջ կարողութեամբ պետք է իր մեջ պարունակի «... Եկալք, զանձինս անձամբք միփթարեացք» (Քաղ., III, ԻԱ, էջ 84)՝ Եկե՛ք մենք մեզ միփթարե՛նք: «... Յանձն իւր տարարե՛րք» (Նգնիկ, I)՝ Ինքն իր մեջ տարարե՛րվում էր, տասանգում էր:

ՓՈՒՆԱՎԱՐԳ ԳՆԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՆՑ ՀԱՌՊՈՒԹԸ

§ 128. Գրաբարի փոխադարձ զերանուններն են՝ միմեանց և ինքեաց, որոնք եզակի թվի չունեն, ինչպես նաև չունեն հոլ-

Տակի թվի ուղղական հարվը: Հարվվում են անժամական հարվ-
մամբ, Ա հարվիչնով:

Ուղղ. —	—	—
Ս.	միմեանց	իրերաց
Տ.	միմեանց	իրերաց
Հ.	զմիմեանս	զիրերարս
Բ.	ի միմեանց	իիրերաց
Պ.	միմեամբք	իրերամբք (օք)

ՅՈՒՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒԹՎՈՒՄԸ

§ 129. Գրարարի ցուցական զերանուններն են՝ առ, դա ևս. այս, այդ, այն, սոյն, դոյն, որոնց մեջ առկա են ս, զ, և արմատական բաղաձայնները: Այլ արմատական բաղաձայններ՝ առանձին հանդես են զալիս որպէս հոգեբ:

Գրանցից լուրջանչաբը կազմում է Յ զերաւուն՝ ա—սս այս, սոյն, դ—դա, այդ, դոյն, ն—նա, այն, նոյն:

§ 130. Առ, դա, ևս,

Եզակի թիվ

Ուղղ. սս	զս	նս
Ս.	սորս	նորս
Տ.	սմս	նմս
Հ.	զսս	զնս
Բ.	ի սմանէ	ի նմանէ
Պ.	սովաւ	զովաւ

Հոգնակի թիվ

Ուղղ. սոքս	զոքս	նոքս
Ս.	սոցս	նոցս
Տ.	սոցս	նոցս
Հ.	զոսս	զնսս
Բ.	ի սոցանէ	ի նոցանէ
Պ.	սոյուք (օք)	զոքուք (օք)

¹ Սրանք սկզբնապէս հիմքի մայրաբոյրի ճեռ ունեցել են սս, զս, նս և ձևերը:

Այս զերանունների հոգնակի բացասականը հանախ գործած-
վում է ն հոգով՝ ի սոցանէն, ի զոցանէն, ի նոցանէն:

Այս, այդ, այն

§ 131. Այս, այդ, այն զերանունները հարվվում են կրկնակ ևճերով, եզակի թվում կրկնակ ձևերը հանդես են զալիս թեք հարվ-
ներում. իսկ հոգնակի թվում՝ բոլոր հարվներում:

Եզակի թիվ

Ուղղ. այս	այդ	այն
Ս.	այսր, այսորիկ	այդր, այդորիկ
Տ.	այմ, այմիկ	այդմ, այդմիկ
Հ.	զայս	զայդ
Բ.	լայմ, լայմանէ	լայդմ, լայդմանէ
Պ.	այսու, այսուիկ	այդու, այդուիկ

Հոգնակի թիվ

Ուղղ. այսք, այսքիկ	այդք, այդքիկ	այնք, այնքիկ
Ս.	այսց, այսցիկ	այդց, այդցիկ
Տ.	այսց, այսցիկ	այդց, այդցիկ
Հ.	զայս, զայսուիկ	զայդ, զայդուիկ
Բ.	լայց, լայցանէ	լայդց, լայդցանէ
Պ.	կամ լայսցիկ	կամ լայդցիկ
	այսոքիք	այդոքիք
	(այսոքիմբք)	(այդոքիմբք)
		(այնոքիմբք)

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.—Այս և այդ զերանունները հոգնակի
հարվանում առաջին ձևերում սովորաբար ս մասնիկը չեն
ունենում և հանդես են զալիս եզակի ձևով՝ զայս, զայդ
իսկ զայն սովորական է:

Հոգնակի գործիականում այսոքիք, այդոքիք, այնո-
քիք ձևերը ընդհանուր են թէ կարճ և թէ երկար ձևերի
համար:

Սոյն, զոյն, նոյն

եզակի բ.

Ա.դդ.	սոյն	զոյն	նոյն
Յ.	սորին (սորուն)	զորին	նորին, նորուն
Ճ.	ամին	զմին	նմին
Հ.	զսոյն	զոսոյն	զնոսոյն
Բ.	ի ամին	ի զմին	ի նմին
Պ.	սովին, սովմբ	զովին, զովմբ	նովին, նովմբ

Հոգնակի բիվ

Ա.դդ.	սոցին, սոցնք,	զոցին, զոցնք	նոցին, նոցնք
Յ.	սոցին, սոցուն,	զոցին, զոցուն,	նոցին, նոցուն,
	սոցունց	զոցունց	նոցունց
Ճ.	սոցին, սոցուն,	զոցին, զոցուն,	նոցին, նոցուն,
	սոցունց	զոցունց	նոցունց
Հ.	զսոսին, զսոսն	զզոսին, զզոսն	զնսոսին, զնսոսն
Բ.	ի սոցունց	ի զոցունց	ի նոցունց
Պ.	սոցիմբք, սովիմբք	զոցիմբք, զովիմբք	նոցիմբք, նովիմբք,
	(սոցումբք)	(զոցումբք)	նոցումբք

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.— Փակագծերում նշված ձևերը, որոնք փերաբերում են սոյն և զոյն գերանուններին, տարածված չեն (եզակի սեռականում՝ սորուն, հոգնակի դարձակումում՝ սորումբք, զոցումբք), մինչդեռ նոյն գերանվան համապատասխան ձևերը՝ նորուն, նորումբք սովորական են։

Որոշ ձևեր էլ նամեմատաբար ուշ շրջանի են կամ քիչ դարձածական՝ սոցուն, սոցունց, զոցուն, զոցունց, սովիմբ, զովիմբ, սովիմբք, գովիմբք։

ՅՈՒՏԱԿԱՆ ԳՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 133. Օտցական գերանուններից դարական անունների հետ գործածված են այս, այդ, այն, սոյն, զոյն, նոյն գերանունները, իսկ սա, դա, նա գերանունները անխախ են և զդական անունների հետ չեն գործածվում։

§ 134. Այս, այդ, այն գերանունները գոյական անուններ հետ գործածվում են թե նախադաս, թե կտառաս և բարաքան չար գեղյում հանդես են գալիս տարբեր ձևերով։

§ 135. Նախադաս գործածվելիս այս, այդ, այն ցուցական գերանունները հոլովվում են առաջին ձևով։ Այս զեղյում նախ զիրենքը զրվում են գերանունների վրա։ Հոգնակի ուղղական, հայցական և մասնավոր էլ դարձական հոլովներում գերանուններ մնում են կզակի։

Հոլովման օրինակ

եզակի բ.

Հոգնակի բ.

Ա.դդ.	այս տուն	այս տունք
Ս.	այդ տուն	այդ տունց
Տ.	այն տուն	այն տունց
Հ.	զայս տուն	զայս տունց
Բ.	լայս տունէ	լայսց տանց
Պ.	այտ տամբ	այտ տամբք կամ այտքիք տամբք

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.— Հոյնակի թվում նախադաս գործածությամբ հանդիպում են նաև այս գերանունների կրկրորդ ձևերը՝ այսոքիկ աունք, այսոցիկ աւնց, այսոցիկ աւնց, զայսսիկ տունս, յայսցիկ աւնց, որունք, սակալն, այսպիսի գործածությամբ շատ տարածված չեն։

Դերանունների կտառաս գործածությամբ զեղյում երևան են գալիս հետևյալ առանձնահատկությունները՝ ա) զոյական անուն բնորոշում է համապատասխան ցուցական հոգ, բառ գերանունների՝ այս—ս, այդ—դ, այն—ն, թ) գերանունները հոլովվում են կրկրորդ ձևով, զ) նախգիյաները կրկնվում են։

Հոլովման օրինակ

եզակի բ.

Հոգնակի բ.

Ա.դդ.	տանս այս	տանքս այտքիկ
Ս.	տանս այսոքիկ	տանցս այտցիկ
Տ.	տանս այմիկ	տանցս այսոցիկ
Հ.	զտանս զայս	զտանսս զայսսիկ
Բ.	ի տանէս լայսմանէ	ի տանցս լայտցանէ
Պ.	տամբս այտիկ	տամբքս այտքիք

Այս ձևով էլ հղովմամ են այդ և այն գերանունները, իսկ գորական անունը բնդունում է նրանց համապատասխանող հոգերը՝ որինակ՝ առևնդ այդ, տանդ այգորիկ, տանդ այգմիկ, գտունդ գայդ, ի տանեղ յայգմանե, տաներդ այգուիկ, առևնդ այգորիկ, տանցդ այգորիկ, տանցդ այգոցիկ, գտունց գայգոցիկ, ի տանցդ յայգցանե, տամբքդ այգորիք կամ՝ առևնե այն, տանն այնորիկ, տանն այնմիկ, գտունն գայն, ի տանն յայնմանե, տամբն այնուիկ, առևնքն այնորիկ, տանցն այնոցիկ, տանցն այնոցիկ, գտունն գայնուիկ, ի տանցն յայնցանե, տամբքն այնորիք:

Ինչպես տեսնում ենք, ետապաս գործածությունը գերանունները բոլոր հղովմերում թվով համաձայնում են գորականին, սակայն անդ-տեղ, հատկապես ուղղակիանում, կան անհամաձայնություն հեղուկներ, այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում՝ իրքդ այդ (Ազաթ., էջ 28), փոխ, իրքդ այգորիկ, բանքս այս (Ազաթ., էջ 71), փոխ, բանքս այսորիկ, իրքդ այդ (Բուգ., IV, Ի, էջ 208) փոխ, իրքդ այգորիկ:

Այս, այդ, այն ցուցական գերանուններին ետապաս գործածության հեղուկներ, բացի դ և ի նախդիրներից, ըստ գործածության կարող են կրնալ նաև տրիշ նախդիրներ, ինչպես՝ բնդ ժամանական բնդ այնուիկ (Ազաթ., էջ 78), բնդ բանն բնդ այնուիկ (Բուգ., IV, Ի, էջ 207), այս օրինակներում կրնալ մեծ բնդ նախդիրը Այս տեսակիանց բացառություն է կազմում առ նախդիրը, որը նման հեղուկներում չի կրնալ:

Ինչպես նշվեց, որպես կանոն, գորական անունները համապատասխան ցուցական հոգ են ստանում, երբ այս, այդ, այն գերանունները նրանց հետ ետապաս են գործածվում, սակայն առանձին կուպակցությունների մեջ գորականի վրա ցուցական հոգեր են հանդիպում նաև հիշյալ գերանունների նախադաս գործածության հեղուկներ, օրինակ՝ այդը նշանիդ (Ազաթ., էջ 400), այս երանկոյս (Բուգ., III, Ժ, էջ 36), այս տեղիքս (Բուգ., III, ԺԴ, էջ 57), այս բանիս (Բուգ., IV, Ժ, էջ 160), յայս ժամուս (Բուգ., V, Գ, էջ 294), յայս ժամանակիս (ն. տ.): Մրանք, ինարկն, մանանկի հեղուկը են և որոշակի կանոնի չեն վերածվում:

§ 136. Փոյական անուններին հետ այս, այդ, այն ցուցական գերանուններին փոխարեն հաճախ գործածվում են աստ, անդ, այսք, այդք, անդք, աստի, այսի կամ այդի, անտի բառերը, որոնք անկան գործածությունը մակրոյ են համարվում, սակայն

նման հեղուկներում նշանակվածք փոխարինում են ցուցական գերանուններին ու ցուցական հոգերին:

Մրանցից աստ, անդ բառերը գործածվում են այն հեղուկում, երբ արտահայտվում է դադարման գաղափար, օրինակ՝ գտանք ի բաղաքի անդ, կայք ի ասն անդ, փոխ. գտանք ի բաղաքին յայնմիկ—գտնվում էր այն քաղաքում, կայք ի ասնն յայնմիկ—գտնվում էր այն տանը, այն տանն էր: Փանամ կնք նաև համատեղ գործածության օրինակ՝ ի ժամանակի անդ յայնմիկ (Բուգ., IV, Ի, էջ 223):

Այսք, այդք, անդք բառերը գործածվում են տեղափոխություն ցուց տեղը հեղուկում (սեղորման հայցականին հետ), օրինակ՝ գնաց ի գիւղ անդք, փոխ. գնաց ի գիւղն յայն—գնաց այն գիւղը, եկն ի բաղաք այսք, փոխ. եկն ի բաղաքս յայս—եկավ այս քաղաքը, ե՛րբ ի նրապարտի այդք, փոխ. ե՛րբ ի նրապարտիդ յայդ—գնա այդ հրապարակը:

Աստի, այսի (այդի), անտի բառերը զրկում են շարժման ելակետը հանդիսացող առարկայի անվան վրա (բացառական հղովի հետ): Այս կիրառությունը շատ սովորական ու արտածված կերպով է մեր մտանագիտության կրկնում: Օրինակներ. «ի մերոց գորաց աստի» (Ազաթ., էջ 26), փոխ. ի մերոց գորաց յայսցանե—մեր այս գործերից, «ի լուսնականաց այսի» (ն. տ.), փոխ. ի լուսնականաց յայցանե—այդ հուսնականներից (հուսնական այդ գործերից), «ի գազանութենն անտի» (եզնիկ, I, Ժ, էջ 45), փոխ. ի գազանութենն յայնմանե—այն գազանությունից, «ի ժառուլ անտի» (եզնիկ, II, Գ, էջ 84), փոխ. ի ժառուլ յայնմանե—այն ժառուլ, «ի լառուլ անտի» (Բուգ., IV, Ը, էջ 151), փոխ. յայլույս յայնմանե—այս այլուց, «ի ձիոյ այսի» (Բուգ., VI, Ը, էջ 399), փոխ. ի ձիոյ յայնմանե—այդ ձիուց:

§ 137. Սոյն, զոյն, նոյն գերանունները գորական անունների հետ գործածվելիս զրկում են գորական անուններից տառը և սովորաբար թվով ու հղովմով համաձայնում են: Հոգնակի ուղղական և հայցական հղովմերում այնք, զոյնք, գտոյնս, գզոյնս, նոյնք և գնոյնս ձևերը գորականի հետ չեն գործածվում, որոնք մեծ են կուպի, իսկ մյուս ձևերը՝ սարին, զորին, նորին, գզոյն, գզոյն, գնոյն գործածվում են:

Հոգնակի գործխանում գերանունը մտաւ է նշակի, թվով չի համասանում:

Հոլովման օրինակ

նզակի բ.	Հոգնակի բ.
Ազգ. նոյն գործ	նոյն կամ նոցին գործք
Ս. նորին գործուլ	նոցին գործոց
Տ. նմին գործուլ	նոցին գործոց
Հ. զնոյն գործ	զնոյն կամ զնոսին գործս:
Բ. ի նմին գործուլ	ի նոցանց գործոց
Գ. նովին գործուլ	նովին գործուլք

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Որոշ քերականներ հոգնակի գործխանում գոյական անվան հետ զնում են նաև գերանվան հոգնակի ձևը (օրինակ, Չարլստանի մաս, էջ 48), սովախ փաստերը ջուրը են սալիս, որ զաստիան մասննազդերնը այդ զեպքում գերանունը սովորաբար եզակի թվով են գործածում, օրինակ՝ նովին կերակրուլք (եզնի, II, ԺԱ, էջ 101), նովին հաւատաւք (եզնի, II, ԺԷ, էջ 117), սովին մտօք (եզնի, I, ԺԲ, էջ 106), սովին բանիք (Բուգ, IV, ԺԸ, էջ 198):

ՍՍՏՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԲԱՆՑ ՀՈՂՈՎՈՒՄԸ

§ 138. Գրաբարի ստացական գերանուններն են՝ իմ, քս կամ քոյ, իր, մեր, ձեր: Ինչպես ստաշին իսկ հարաջբից կարելի է նկատել, որանք ծագում են անձնական գերանուններից մարդու լինելով այդ գերանունների սեռական հոլովածներից՝ ստացական գերանունները հանգես են դալիս որպես սկզբնական ե հոլովվում են անձնական գերանուններից ստաշեր հոլովմամբ: Սրանք հոլովվում են անվանական հոլովմամբ՝ Ա հոլովելու: Եզակի բացասականում անձնում են ում հոլովակերտ մասնիկը, իսկ եզակի բացասականում ստանում են Է հոլովակերտ մասնիկը Փ գերանունը հոլովվում է երկու հիմքով՝ քս և քոյ: Վերջինս եզակի բացասականում հանգես է դալիս նաև ստանց Է հոլովակերտ մասնիկի:

Եզակի բ.

Ազգ. իմ քս, քոյ	իր	մեր	ձեր
Ս. իմուլ քուլ, քուլուլ	իրուլ	մերուլ	ձերուլ
Տ. իմում քում, քում (քուլուլ)	իրում	մերում	ձերում
Հ. զիմ զքս, զքոյ	զիրս	զմերս	զձերս
Բ. լիմմէ ի քումէ՛, ի քուլուլ	լիրմէ	լի մերմէ	լի ձերմէ
Գ. իմով քով, քովով	իրով	մերով	ձերով

Հոգնակի բ.

Ազգ. իմք քուք	իրք	մերք	ձերք
Ս. իմոց քոց, քուլոց	իրոց	մերոց	ձերոց
Տ. իմոց քոց, քուլոց	իրոց	մերոց	ձերոց
Հ. զիմս զքոյս	զիրս	զմերս	զձերս
Բ. լիմոց ի քոց, ի քուլոց	լիրոց	լի մերոց	լի ձերոց
Գ. իմովք քովք, քուլովք	լիրովք	մերովք	ձերովք

§ 139. Մեր, ձեր, իր ստացական գերանուններից կազմվում են նաև անանցական ձևեր՝ մերային, ձերային, իրային, որոնք հոլովվում են Ա պարզ հոլովմամբ՝ մերայնոյ, ձերայնոյ, իրայնոյ: Գրաբարում...

Քեք հոլովածներում որանք հանդես են գալիս նաև ստանց ն-ի՝ մերուլուլ, ձերուլուլ, իրուլուլ և այլն:

Պան նաև իմոյին, մերոյին, ձերոյին, իրոյին, քոյին ձևերը որոնք հազվադեպ են և չեն հոլովվում (մեարսուլան շրջանից այնպիսի է միայն քոյին):

§ 140. Ստացական գերանունների խմաստով երբևէ գործածվում են նաև սա, դա, նա գերանունների սեռական հոլովածներից թողև սորա, դորա, նորա, սոցա, զոցա, նոցա ձևերը, որոնք նախնայ Ա հոլովելով են հոլովվում, եզակի արականում ստանալով ում մասնիկը: Հոլովվելիս որանք ա մասնալուրից հետո ստանում են նաև յ նշյունը՝ նորալուլ, նորալում և այլն:

¹ Սիմմէ ձևի նմանությունը գործածվում է նաև ի քումմէ ձևը գրածով մ Ենյունի գրվածությունը բառակերպություններից չի բխում (որքան, բայք ի քումմէ):

եկատելի է, որ կիրառութիւն մեջ այս բառածերում ազելի թշխում է փոխանանութիւն զազոպտորը, սակայն, ինչպէս նշվեց, երբեմն սրանք զործածվում են նաև ստացական նշանակութեամբ:

ԱՏԱՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՐՎՈՒՄԸ ԳՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՑ

§ 141. Իմ, քո (քոյ), իւր, մեր, ձեր ստացական գերանունները գոյական անունների հետ զործածվելիս հարկվում են և թվով ու հարկով համաձայնում, բացի հոգնակի ուղղական և հայցական (մասամբ էլ զործիական) հարկներից, որտեղ գերանունը թեոմ է կզակի Այս գերանունները գոյական անունների հետ ո՛ր նախադաս, ո՛ր ետադաս զործածութիւն աւնեն:

Հարկման օրինակ

ն ա ի ս ա դ ա ս

Եզակի ք.	Հոգնակի ք.
Ուղղ. իմ քոյը	իմ քորք
Ս. իմոյ քեռ	իմոց քերց
Տ. իմում քեռ	իմոց քերց
Հ. զիմ քոյը	զիմ քորս
Բ. լիմմէ քեռէ	լիմոց քերց
Գ. իմով քերբ	իմովք քերբք

Ե ա ո զ ա ս

Ուղղ. քոյը իմ	քորք իմ
Ս. քեռ իմոյ	քերց իմոց
Տ. քեռ իմում	քերց իմոց
Հ. զքոյը իմ	զքորս իմ
Բ. ի քեռէ իմմէ	ի քերց իմոց
Գ. քերբ իմով	քերբք իմովք

ՄԱՆՈՒՅՆՈՒՆ 1.—Մասենազիրների երկերում կան օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ գոյական անվան հետ հոգնակի զործիականում ստացական գերանունները զործում են նաև կզակի թվով, օրինակ՝ քոյով կամօք (Ազաթ., էջ 53), իւրով անձնիշխան կամօք (Ազաթ., էջ 138), իւրով կամօք (Եզնիգ, 1, Թ, էջ 26): Սովորականը և սարածվածը հոգնակին է՝ քոյովք սիրելիքդ (Ազաթ., էջ 97), քոյովք ականցօք (Ազաթ., էջ 101), իւրովք ընկերօքն (Ազաթ., էջ 112), իւրովք կամօք (Ազաթ., էջ 138), իւրովք պատուիրանօք (Եզնիգ, 1, ԺԳ, էջ 41) և այլն:

ՄԱՆՈՒՅՆՈՒՆ 2.—Քն ստացական գերանունը նախադաս զործածվելիս սովորաբար հարկվում է քոյ հիմքով՝ քոյ առն, քոյոյ առն, քոյում առն և այլն, իսկ ետադաս զործածվելիս՝ քո հիմքով՝ առն քո, առն քոյ, առն քում և այլն: Լինում են և շեղումներ, օրինակ՝ քովք կամօք (Բագ., 1V, ԾԳ, էջ 253), փոխ, քոյովք կամօք:

ՀԱՐԱՆԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆ

§ 142. Գրաբարում որպէս հարաբերական գերանուն հանդես է գալիս որ գերանունը: Հարաբերական գերանվան զործածութիւն անի նաև ո գերանունը, որը, սակայն, հիմնականում հարցական գերանուն է (հարցականով՝ ո):

§ 143. Որ հարաբերական գերանունը հարկվում է Ո հարկով, եզակի արականում ստանալով ում, իսկ բացառականում է հարկակերպ մասնիկները:

Եզակի ք. Հոգնակի ք.

Ուղղ. որ	որք
Ս. որոյ	որոց
Տ. որում	որոց
Հ. զոր	զորս
Բ. լորմէ	լորոց
Գ. որով	որովք

ՀԱՐՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒՎՈՒԻՐԸ

§ 144. Գրարարի հարցական զերանուններն են՝ ո՞, ո՞վ, զի՞, զի՞ց՝

Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ.
Ուղղ. ո՞, ո՞վ	ո՞վք	զի՞, զի՞ց
Ս. ո՞ք	ո՞յք	է՞ր
Տ. ո՞ւմ	ո՞ւց	ի՞մ, չի՞մ, էրո՞ւմ
Հ. զո՞, զո՞վ	զո՞ք	զի՞, զի՞ց
Բ. լամէ՞	լո՞ւց	ի՞մէ՞, առ ի՞մէ՞, զմէ՞
Գ. (որո՞վ)	(որո՞վք)	ի՞ւ

§ 145. Ո՞ և ո՞վ զերանունները չունեն գործիական հոլովաբն հոլովի համար գործածվում են ո՞ր զերանվան համապատասխան ձևերը

§ 146. Ձի՞, զի՞ց հարցական զերանունները հոգնակի թվով չունեն Գրանք բացասական հոլովում հանդես են գալիս նաև այլ նախդիրների հետ (առ, զ)։


Այս զերանունների տասնձին հոլովաները՝ զի՞, զի՞ց, է՞ր, ո՞վ, ո՞ւմ, առ ի՞մ, զի՞, զի՞ց իմաստով համադր են բնդիք (=ընդ չէ՞ր), վասն է՞ր, է՞ր աղագու, զիա՞րդ (=զի՞րդ + արդ հարցական բաներին ու արտահայտություններին, որոնք նշանակում են ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ)։

§ 147. Արդևս հարցական զերանուն հանդես է գալիս նաև որ հարաբերական զերանունը՝ հարցականով Այս զի՞ցում սովորաբար գործածվում է գոլական անվան հետ (նախագաս), հոլովվում է և թվով ու հոլովով համաձայնում, միայն հոգնակի ուղղական և հայցական հոլովներում մեռն է ևզակի, օրինակ՝

Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ. ո՞ր քաղաք	ո՞ր քաղաքք
Ս. որո՞ն քաղաքի	որո՞նք քաղաքաց
Տ. որե՞ւմ քաղաքի	որե՞նք քաղաքաց
Հ. զո՞ր քաղաք	զո՞րք քաղաքս
Բ. լորմէ՞ քաղաքէ	լորո՞նք քաղաքաց
Գ. որո՞վ քաղաքու	որո՞վք քաղաքուք (օք)

§ 148. Հարցական զերանուն է համարվում նաև բանի՞րաբ, որը հոլովվում է Ու-ն խառն հոլովվումը

Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ. քանի՞	քանի՞ք
Ս. քանևո՞վ կամ քանևո՞ւ	քանևոց
Տ. քանևո՞ն կամ քանևո՞ն	քանևոց
Հ. դքանի՞	դքանիս
Բ. ի քանևո՞ւ կամ ի քանևո՞ւ	ի քանևոց
Գ. քանևու՞ կամ քանևո՞վ	քանևուք (քանևո՞ք)



ԱՆՈՐՈՇ ԳԵՐԱՆՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒՎՈՒԻՐԸ

§ 149. Գրարարի անորոշ զերանուններն են՝ ո՞մն, ո՞ք, ի՞մն, ի՞նչ, այլ, միևս (մէւս), Արանցից ո՞մն, որ զերանունները սովորաբար գործածվում են անձի, իսկ ի՞մն, ի՞նչ՝ իրի համար։

§ 150. Ինչպես կարելի է տեսնել ստորև, այս զերանունները հոլովվում են անվանական (այլ, միևս), զերանվանական (ի՞մն, ի՞նչ) և զերանվանական-անվանական հոլովվումը (մի մասով լորհասակի մի մասով էլ զգոլականների հոլովումը՝ ո՞մն, ո՞ք)։

§ 151. Ո՞մն, ո՞ք

	Եզակի թ.	Հոգնակի թ.
Ուղղ. ո՞մն	ու՞ք	ու՞մնք
Ս. ուրա՞ն	ուրա՞ք	ու՞մնց
Տ. ումե՞ն	ու՞մեք	ու՞մնց
Հ. զո՞մն	զո՞ք	զո՞մնս
Բ. լումե՞նե՞	լումե՞ք	լումնց
Գ. ու՞մսք	(ու՞մսք)	ու՞մսքք

Ո՞մն, ո՞ք զերանունները հոգնակի թվում հոլովվում են նույն ձևով ևզակի գործիականում որ զերանունը հասակ ձև չունի, այդ հոլովում նրան փոխարինում է ո՞մն զերանունը՝ ու՞մսք

Իմն, ինչ
Եզակի ք.


Ուզգ. իմն,	Ինչ
Ս.	Իրիք
Տ.	Իմիք
Հ.	զիմն, զի՛նչ
Ք.	լիմննե, լիմհքէ
Գ.	— իւիք ¹

Իմն, ինչ զերանունները հոգնակի թիվ չունեն: Ինչք բառը պետք է համարել ոչ թե զերանուն, այլ գոյական անուն, գոյաբյուտն ունեցող բան, ունեցվածք նշանակութամբ. հարովժամ է Ի հարովիչով՝ ինչք, բնչից, բնչից, զինչս, շինչից, բնչիւք:

Իմն, ինչ զերանունները գրարարում հանդիս են գալիս նաև որպես թարմասար՝ զրգիլով անունների գործիական հարովի, մակբայների և առհասարակ գործողության ձևը ցույց տվող բաների (Նախոց, մեջ ձևի պարագա), ինչպես նաև բայերի վրա, արտահայտում են ձև, կերպ, անակ իմաստները, այն ցույց են տալիս ասարտամության գաղափար: Օրինակներ. Ե. . . նուցա նեհգութեամբ ինչ ետան նմա զերգումն» (Բուզ., IV, ԾԴ, էջ 250)¹ նրանք նեհգութեամբ նրան երգում ավելին: «Ապա թէ ի վերայ նալ հողոն խիտ ինչ բարբառեցի . . . » (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)² Իսկ եթե նախկինն հողի վրա խիտ ձևով խոտի «Եւ ոչ ի սաստից սպանալիսաց իմոց երկան ինչ նոցա» (Ագաթ., էջ 87)³ Եվ ոչ էլ իմ սպանալիցների սաստաներից վախեցան նրանք: «Յետ մատանն Սանատրիդ արքայի շգութի իմն թայտարութիւնն» (Մտր., II, ԼԷ, էջ 161)⁴ Սանատրակ արքայի մահից հետո թագավորությունը (ինչ որ ձևով) շգութեամբ է: «Եկայիս իմն կկեայ հասեայ է վախճան տէրութեանն» (Ողիւն, I)⁵ Այս ձևով (այսպիսով) կկէ-հասել է նրա տերութեան վախճանը:

¹ Ենթադրվում է, որ ք-ով ձևերը գործածությունից զուր բնիվ իր զերանուն ձևերն են, որոնցով ցուցվում են իմն, ինչ զերանունների պահանջ ձևերը. Նմա. Հ. Անուշան, «Էջիպասար Երևանում» Երևանի շառչ լեզվի՝ համեմատությունը 362 լեզուների, Նաա. II, Երևան, 1954 թ., էջ 409-410:

§ 152. Այլ և միւս զերանունները հարովժամ են Ո հարովիչով, ստանալով կզակի արականում և՛մ, իսկ բացասականում է հարվակերտ մասնիկները:



Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.
Ուզգ. այլ	այլք	միւս
Ս.	այլոյ	միւսոյ
Տ.	այլում	միւսում
Հ.	զայլ	զմիւս
Ք.	լայլէ	ի միւսէ
Գ.	այլով	միւսով

Միւս զերանունն հոգնակին տարածված չէ:

§ 154. Այլ զերանունը հաճախ հանդիս է գալիս մեծ, ուր, իմն, ինչ զերանունների հետ, գարձալը անորոշ նշանակութամբ՝ այլ որ, այլ ոմն, այլ ինչ, այլ իմն Սրանք միտին վերջված հարովժամ են դուգահեարքա, այլպես՝ այլ ոմն, այլոյ ուրումն, այլում ումնմն..., այլ որ, այլոյ ուրուք, այլում ումք..., այլ իմն, այլ ուս, այլ ոմն..., այլ ինչ, այլոյ իրիլ, այլում իմիլք...:

§ 155. Իմն և ինչ զերանունները հանդիպում են նաև կրկնված ձևով՝ իմն իմն, ինչ ինչ, իրիլ իրիլք, իմիլք իմիլք...:

§ 156. Ոք, ինչ անորոշ զերանունները շատ հաճախ հարական զերանունների հարադրութամբ են գործածվում՝ ո՞ որ, զի՛նչ ինչ և հարովժամ են այլպես՝

Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.
Ուզգ. ո՞ որ	ո՞ք	զի՛նչ ինչ
Ս.	ո՞ր ուրուք	է՞ր իրիլք
Տ.	ո՞ւս տմնք	թմ իմիլք
Հ.	զո՞ որ	զի՛նչ ինչ
Ք.	լումէ՞ տմնքէ	առ իմէ՞ իմնքէ
Գ.	որով՞ ումք	թւ իրիլք

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ.— Զի՛նչ ինչ հարադրութունը հոգնակի թիվ չունի, նման զի՛նչի հարցական զերանունը գործածվում է իր գոյական անվան հոգնակի թվի հետ՝ զի՛նչ իրիլ՝

ԱՆՈՐՈՇ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ
ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

157. Ոմն, որ անորոշ զերանունները զրվում են անձի անվան հետ (սովորաբար կտաղաս) և թվով ու հորովով համարվում են:

Եզակի ք.

Հոգնակի ք.

Ազգ. այլ ոմն	այլ ոք	արք ոմանք
Ս. ասն տրանն	ասն տրոք	արանց ոմանց
Տ. ասն տմհնն	ասն տմեք	արանց ոմանց
Հ. զայր ոմն	զայր ոք	զարս ոմանս
Բ. լառնէ տմհնէ	լառնէ տմեքէ	լարանց ոմանց
Գ. արամք ոմամք	արամք ոմամք	արամքք ոմամքք

§ 158. Ըմն, ինչ զերանունները զրվում են իրի անվան հետ, նորայն կտաղաս, օրինակ՝

Եզակի ք.

Հոգնակի ք.

Ազգ. ծառ ինչ (=ինչ որ ծառ)	ծառք ինչ
Ս. ծառոյ իրիք	ծառոց ինչ
Տ. ծառոյ իմիք	ծառոց ինչ
Հ. զծառ ինչ	զծառս ինչ
Բ. ի ծառոյ իմեքէ	ի ծառոց ինչ
Գ. ծառով իւիք	ծառովք ինչ

Ինչպես տեսնում ենք, հոգնակի թվում ինչ զերանունը անփոփոխ է մնում:

Ինչ զերանունը սակավ զետեքերում ենք դրնում գոյականներին հետ նախադաս զործածված՝ ինչ զօրուրիւն ծածուկ (Եզնիկ, I, Բ, էջ 9)՝ ինչ որ գազանի զօրութիւն (ուս), ինչ չար զօրութիւն (Եզնիկ, I, Գ, էջ 15) ինչ որ (մի) չար ուս: Սովորաբանը կտաղաս զործածութիւնն է:

§ 159. Այլ, միւս զերանունները զոյական անուններին հետ հանդես են գալիս նախադաս զործածութիւնք և թվով ու հորովով համարվում են: Այլ զերանունը հոգնակի ուղղական և հայ-

պական հոլովներում մնում է կզակի, իսկ միւս զերանունը հոգնակի թվում սովորաբար զոյական անվան հետ չի հորովվում:

Եզակի ք.

Ազգ. այլ բան (=որիչ խոսք)	միւս օր
Ս. այլոյ բանի	միւսոյ աւուր
Տ. այլոս բանի	միւսոս աւուր
Հ. զայլ բան	զմիւս օր
Բ. լայլմէ բանէ	ի միւսմէ օրէ
Գ. այլով բանիւ	միւսով աւուրք

Հոգնակի ք.

Ազգ. այլ բանք
Ս. այլոց բանից
Տ. այլոց բանից
Հ. զայլ բանս
Բ. լայլոց բանից
Գ. այլովք բանիւք

Սրանց նախադաս զործածութիւնը շատ տարածված երկրորդ է գրաբարում, սակայն բացարձակ կանոն չէ, տեղ-տեղ հանդիպում են կտաղաս զործածութիւն զեզակի, օրինակ՝ գաւակ այլ (Ծննդ., Գ, 25), ճողի այլ (Թիւք, ԺԳ, 24), առն այլոյ (Տոր., IԱ, 9), ազգի այլում (Դան., Բ, 44), ամից միւսոյ (Ա. Մակ., Գ, 28): Իսկ նախադաս զործածութիւնք էլ կան չհորովված սակավ օրինակներ՝ այլ երնջովքն (Ծննդ., ԽԱ, 3), փոխ. այլովք երկնջովք, ի միւս կողմանէ (Պարենացի), փոխ. ի միւսմէ կողմանէ:

ՈՐՈՇԱԿ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՆՏ ՀՈՒՎՈՒՄԸ

§ 160. Գրաբարի որոշյալ զերանուններն են՝ ամենեքին, ամենեքեան (=ամենքը, բոլորը, ամենքն էլ, բոլորն էլ), բոլորեքին, բոլորեքեան (=բոլորը, բոլորն էլ), ամենայն:

§ 161. Ամենքին, ամենքեան և բոլորքին, բոլորքեան
 զերանաները հայովում են Ու հայովելով, միայն հոգեակի թվով:

Ուղղ. ամենքին, ամենքեան	բոլորքին, բոլորքեան
Ս. ամենեցուն, ամենեցունց	բոլորեցան, բոլորեցանց
Տ. ամենեցան, ամենեցանց	բոլորեցան, բոլորեցանց
Հ. զամենեանին, զամենեանան	զբոլորեանին, զբոլորեանան
Բ. լամենեցանց	ի բոլորեցանց
Փ. ամենեցամբք	բոլորեցամբք

§ 162. Ամենայն զերանանը հայովում է Ի հայովելով, ստորարար միայն եզակի թվով:

Ուղղ. ամենայն
Ս. ամենայնի
Տ. ամենայնի
Հ. զամենայն
Բ. լամենայնէ
Փ. ամենայնիւ

Այս զերանանը զոչական անունների հետ գործածվելու չի հայովում, իսկ անկախ գործածվելու հայովում է:

ՍՄՆՆԹՈՒԹՅՈՒՆ.— Այս զերանանը որևէ բան խմտառով գործածվում է նաև որպես անորոշ զերանան:

ԽՈՒՆԱՐՀՈՒՄ

§ 163. Բառերի քերականական ժողովման տեսակներից մեկն էլ խմտաբանն է: Եթե հայովումը հասուկ է անուններին, ապա խմտաբանը հասուկ է բայերին: Հայովման և խմտաբանի համակարգելով ամբողջականանում է բառերի թիվսան (հայովում և խմտաբան) պատկերը: Ասանց այդ երկու համակարգելի չի կարելի պատկերացնել զբարբաի (և ոչ միայն զբարբաի) մեարանա թվանը:

Ինչպես նշեցինք, խմտաբանը հասուկ է բայերին, զբա հետ միասին բայերին հասուկ են նաև քերականական այլ կորզիլ (կատգորիաներ): Բայերի խմտաբանը ամբողջական մեղ է խմտաթվամբ բարձրելու համար խիստ անհրաժեշտ է բաշխան մլուս կարգի ռատնաօրոթվանը:

§ 164. Բացի բաղմամտաց, որն արտահայտում է գործողութվան, եղևթվան, զբոթվան, բաշն ունի նաև սևա, եղանակ, խմտաբանն ձև (մասամբ և կերպ), մամանակ, թիվ, զեմք:

§ 165. Գրաբարում ևս նախադասութվան մեջ բայը հանդես է գալիս զիմաստի և զերբայական մեղով:

§ 166. Գերբայները գրաբարում չորսն են՝ անորոշ, ենթատրայական կամ ներկա, անցյալ և ապանիս: Սրանց կազմութվան մասին խոսվում է ստորև:

ՍՄՆՆԹՈՒԹՅՈՒՆ.— Գրաբարի քերականներից շատերը անորոշ զերբայը համարում են եղանակ (աներևոյի կամ անորոշական եղանակ), իսկ ներկա (ենթատրայական), անցյալ և ապանի զերբայները միավորում են մի անվան առակ՝ ընդունելություն: Ոմանք էլ զերբայ են համարում միայն տևող զերբայի հայովում մեղեր, սակայն պահպանելով գերբայից լամանաբա:

§ 167. Բայական սեւերը ինչպէս աշխարհարարում, այնպէս էլ գրաբարում որոշվում են բայի այն իմաստով, որը արտահայտում է զործողութեան կրակետի և վախճանակետի փոխհարաբերութեանը, ենթակայի և ինչորի (գործողութեան սուբյեկտի և օբյեկտի) գախ՝ նախադասութեանը:

Ներգործական սեւի բայերն արտահայտում են Ներգործում, կրք բայի ցույց տալով գործողութեամբ մի առարկա ներգործում, սոցան է մի այլ առարկայի վրա, օրինակ՝ «Հայր սիրէ զորդին» նախադասութեան մեջ ցույց է արվում, որ հայրը ներգործում է որդու վրա, հայրը սիրում է որդան՝ ընդ կոչման գրեզ՝ նախադասութեան մեջ էլ ցույց է արվում, որ ես ներգործում եմ խոսակցի վրա, ես կանչում եմ իմ խոսակցին (ես կանչում եմ զեզ), արևն, սիրելի և կոչել (—կանչել) ներգործական սեւի բայեր են: Ներգործական սեւի բայերի թիվը դրարարարում մեծ է, որպես նմա՛ւ հիշատակում ենք մի քանիսը՝ գրել, գործել, կարգել, պատմել, կազմել, տեսանել (—տեսնել), արկանել (—պցել, նետել), զգալ, ամալ (—լցնել, թափել, զատարկել), լուսնալ, բողոլ (—թողնել), նկարել (—թափել), լեղուլ (—փոխել, թարգմանել), լսուլ (—փշրել, մանրել, հզկել), կիզուլ (—ալլել) և այլն:

Եթէ ներգործական սեւի բայերը արտահայտում են գործողական սեւում ենթակայից ինչորի վրա, գործողութեան կրակետ ինչորի կողմից, ապա կրավորական սեւի բայերը արտահայտում են զգործողութեան կրում ենթակայի կողմից, այսուպէս գործողութեան սեւում է ինչորից ենթակայի վրա, գործողութեանը կրում է ենթակայան Այսպիսով, այս զեզգում իրականում գործողական կատարում է ոչ թէ ենթակայան, այլ մի այլ առարկա, որը նախադասութեան մեջ ընդունված է կոչել ներգործող ինչորի: Վերջ րիբովմ նախադասութեանները մենք կարող ենք արտահայտել նաև մի այլ մեով՝ «Որդի սիրի ի հորն», «Դու կոչիս լինէն», որտեղ ըստ էության հոր սիրելու և իմ կանչելու զտափաբը չի փոխվում, սակայն նախադասութեանները փոփոխութեան են կրում քերականական սեւակետից՝ «Որդին սիրում է հորից», «Դու կանչում

ես իմ կողմից»: Ներգործական կառուցվածքի նախադասութեանները զսանում են կրավորական կառուցվածքի նախադասութեաններ. նախադր օրինակների ուղիղ խնդիրները (զորդի, զեզ) այսուպէս կանում են ենթակա (որդի, զո), իսկ ենթակայաները (հայր, ես)՝ ներգործող խնդիր (ի հորն, լինէն), և բայերը, որոնք ստորոգյալի պաշտան են կատարում, ներգործական սեւից փերածվել են կրավորական սեւի՝ սիրի—սիրվում է, կոչիս—կանչվում ես: Այստեղից էլ պարզ կերպով երևում է, որ կրավորական սեւի առանձին, յաշտատակ բայեր չկան, դրանք ստացվում են ներգործական սեւի բայերից՝ ըստ կրատական կրելով մեական պանպան փոփոխութեաններ և որոշ զեզներում էլ առանց մեական փոփոխութեաններ, ինչպէս կտեսնենք ստորև:

Չեզոք սեւի բայերը ներգործում կամ կրում չեն արտահայտում. նրանց ցույց տալով գործողութեանը կամ եղելութեանը չի անցնում մի առարկայից մի այլ առարկայի վրա, օրինակ՝ զոչել, վազել, բայել, կլանել, իջանել, մտանել, անցնուլ, ճատանել, խալալ (—շարժել, ցնուլ), խնդալ, զեզալ, ընրանալ, զարմանալ, մերձնալ (—մոտենալ), բարկանալ, բազմել (բազմել), մնալ (մնալ՝ հանցարտ քայլել), երևել (երևի՛մ՝ երևալ), անկանել (անկանի՛մ՝ ընկնել), շիշանել՝ շիշանի՛մ՝ հանցել, մարել), գրուել (—գրուանել, ուրխանալ), ջնաճուլ (—առքանալ), ցանուլ (—խիտա բարկանալ) և այլն:

